որ «յարաբերականն կամ միջարկութիւնն կարօտն են բացատրութեան. «միջարկութիւնն թարգմանութիւն է ի կոչական միջարկութեան, «տէր, և իսկապէս գրած է ի կոչական նշանի տեղն, և անշուշտ ի տառի ձայն հանել տալոյ պատճառաւ վ տառն աւելցրած է. իսկ մենք «վը փոխանակ ի արտասանելոյ՝ երբեմն օվ են ասում, և երբեմն էվ. վերջին վ տառն պահվում ի պատիւ կով բառին հնչման. և չգիտեմ՝ թէ այս ո՞ր դարու պտուղն է, մինչ տեսնում եմ՝ որ շարականի մէջ քանի տեղ Յովհաննէսն՝ Յոհաննէս է. իսկ Յակովբն՝ Յակոբ։ Եօթն խոտաձարակաց շարականի տան գլուխներն՝ Յոհաննէս են բաղ յօդում, Յ---ը՝ վերջին։ Որ Ի ղ---ա։ Հ---ոբիմ։ Վ չկայ։ Յակովբայ Մծբնայ Հայրապետի շարականն օրհնութեան՝ Յակոբ է, Յ---ղ---ը Ա---ամ՝ Կ---ը՝ Ն---ն։ Նոյնպէս և Հանգստեան. Յ---նքակիանական ձոյլ. Ա---ամ՝ Կ---ն։ Որ վ---ն մեր։ Բ---ն։ և լն։

Ի տառն՝ երբ և մտած լինի անգամ, յայտնի է՝ որ Ներսէս Շնորհալին մեր ի տառով գործածած օրհնէմն՝ ---ն է գրել և ---տառի տեղ է գրել և ոչ ի տառի։ Օրհնէմ ղէել երգն ճաշու ժամու, որ այբուբենի կարգաւ է գրած, եթէ կամենար՝ կարող էր այլ բառ դնել, և այսով սկսել. բայց ---ն է նախընտիր կարգել, ուրեմն նորա ժամանակն օրհնել, օրհնո---ն, և այլ այսպիսի բառեր, Պող, Պողոս, գրվում էին և արտասանվում էին ---ն, ---ն---ն, պ---ը պ---ը---, կամ պ---ղ---։ Անառակի շարականն՝ որ նոյնպէս ---, բ, գ, նորա սիրելի կարգն ունի, սկսուած է ---ն, գ---, բ---ն։ Գուցէ թէ և միւս գուրղաներն (կուպլէտներն) եղել են այբուբենի կարգաւ, և այժմ մեզ համար կորած են, որովհետև կրօնաւորաց այսքան ևս բաւ է, ի՞նչ պիտոյ է շուայլութիւն։ Նոյն վերոգրեալ խոտաձարակաց շարականի Յոհաննիսի տան գլուխ այլի տեղ գրած է ---ն---ել մերոյ հայրապետի, որոյ փոխարէն օգնել դնելով՝ եղել է յոհնէ։ Հանգամանքն ցոյց են տալիս որ հեղինակն ---ն---ել է գրել, և այլ տառի տեղ է գրել, և կամեցել է՝ որ Յոհաննէս կարդացուի, քան թէ Յոհաննէս։ Զեմ զարմանում՝ թէ աւրհնութիւնն՝ օրհնութիւն է դառել, և աւծումն՝ օծումն, երբ ահագին Աւրիկիանոսն՝ Օրեղիանոս է փոխուել, և Աւրելիոն քաղաքի անունն՝ Գաղղիացիք Օրլէան են շինել. բայց աններելի եմ համարում՝ որ մեր Սրբազան Հայրապետի անունն Գէորգ՝ չգիտենք թէ ուղիղ ի՞նչպէս պիտի արտասանենք՝ Գէվո՞րգ, թէ Գէորգ, երբ ուղիղ գրում ենք Գէորգ, պէ՞տք է յառաջ քան զտառն «մը տացածին վ կամ – ևս յաւելուլ, ինչպէս հարկաւոր, կամ հոգևոր, կամ լուսաւորիչ բառերի մէջ։ Այսորիկ ադագաւ – տառն մեծ աշխատութիւն է պահանջում, որ հնար լինի հաստատ իմանալ թէ՝ ո՞ւր պիտի ձայն հանէ, և ո՞ւր մնայ անձայն։

Ես թէպէտ քննելի տառից անուններն ի վեր անդր նշանակեցի, բայց միայն ոմանց համար խօսեցայ, և մնացելոց համար չյօժարեցայ առարկել անգամ, որովհետև առանց նոցա ևս յերկարեց բանասիրականս, և ի հաճութիւն լրագրիդ թողում զհրատարակութիւնն, որ մեր ազգի աշխատասէր ուսումնականք՝ որք միանգամ արժանի համարին այս իմ առաջարկութիւնն՝ իւրեանց պատասխանուոյն, իւրեանց կարծիքն մարմնացուցանեն բացայայտութեամբ, որ զգենու քննեալ և կշռադատեալ կանոնի զօրութիւն, և մեզ տարակուսելի երևեալ խնդրոյ առարկայն՝ չմնայ և մեր յետնորդաց համար տարակուսական։

ԵՐՈՒՆԻ ԴԱՆԻԷԼ ՊԱՏԿԱՆԵԱՆ։

ԱԶԳԱՅԻՆ

Վ. ԵՒ. ՀԱՅՐԱՊԵՏ.

Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետս յառաջիկայ Յունիս ամսոյ սկիզբներում պիտի երթայ ի Ռուսական յամառանոցն։

ԳԵՐ. ԱՆԴՐԷԱՍ ԵՒ ԳՐԻԳՈՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍՈՒՆՔ.

Շամախւոյ Վիճակին Հոգևոր Տեսուչ Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոս՝ ի տեղի Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Յօրեանցի՝ Աստրստականի (Պարսկաստանի) Վիճակին Հայոց Առաջնորդ կարգեցաւ։

Գեր. Յօրեանց Արքեպիսկոպոս Դաւրիժէն մեկնելով՝ ի 25-ն Մայիսի հասաւ ի Ս. Էջմիածին, և յառաջիկայ Յունիս ամսոյ սկիզբները Գեր. Անդրէաս Արքեպիսկոպոս ասաի կմեկնի իւր նոր Վիճակը երթալոյ համար։

Ս. ԽԱՉ ՎԱՆԻՑ ՎԱՆԱՀԱՑԻ.

Գեր. Գրիգոր Արքեպիսկոպոս Պաղինեանց՝ Հին-Խրիմու Ս. Խաչ Վանից Վանահայր կարգուելով՝ ի 24-ն ամսոյս ասաի մեկնեցաւ։

ՕՐԻՈՐԴԱՑ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ՎԱՂԱՐՇԱՊԱՏԱՑ.

Մայիս ամսոյ 27-ին կատարուեցաւ Վաղարշապատի Օրիորդաց ուսումնարանի Նորակառոյց բնակարանի օրհնութեան հանդէսը։—Ինչպէս յայտնի է Երարատի ընթերցողաց քանիցս հաղորդած տեղեկութիւններից, Վաղարշապատու Օրիորդաց դպրոցը բացուեցաւ երկու տարի սորանից առաջ Վեհափառ Կաթողիկոսի ցանկութեամբ և հրամանաւ։ Ենթոնջ և ջերմեռանդ հոգացողութեամբ և ջանիւք Հոգաբարձու հեռց և Տեսչի սոյն դպրոցը սկսաւ արագութեամբ ծաղկիլ և յառաջադիմութիւն ցուցանել։

Նկատելով դպրոցի այսպիսի յառաջադիմութիւնը՝ Նորին Օծութիւն բարեհաճեցաւ մշանջենաւոր յարատևութիւն տալ նորան, ուստի հրամայեց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի արդեամբք կառուցանել յատուկ բնակարան։ Հայաս նորակառոյց բնակարանը, որը բաղկացած է մի ընդարձակ դահլիճից, մի մեծ դասարանից և երկու միջակ սենեակներից բաւականաչափ ճարտարապետական գեղեցկութեամբ, և որը ունեցել է ծախք հաղար ՁԷՅ հարիւր ՐՈ-ԷԼՈ-ՅԱ-ԷԼԷ, օրհնուեցաւ ամսոյս 27-ին կիրակի օրը՝ բաւականին շքեղ հանդիսով։ Յիսունի չափ օրիորդները միատեսակ հանդերձներով և գլխարկներով զարդարած լսեցին սուրբ Պատարագը՝ Էջմիածնի Տաճարի մէջ։ Օրհնի աւարտման Ս. Պատարագի սկսուեցաւ հանդիսի ընթացքը. նախ գնուեցին օրիորդները զոյգ զոյգ և ձեռքներին մոմերով, յետոյ գնուեցին Էջմիածնի Դպիրք սպիտակ շապիկներով երգելով պատշաճաւոր շարականներ, ապա մի քանի Եպիսկոպոսներ և Վարդապետներ շուրջառներով, խաչով, խաչվառով, մոմերով ելին։ Բազմաթիւ կանայք և արք ուղեկից էին հանդիսաւաւոր ընթացքին։ Նորակառոյց դպրոցի դահլիճի մէջ, որի գլխաւոր պատը զարդարած էր գեղեցիկ նկարներով, օրիորդաց ձեռագործներով, կատարուեցաւ Խաչահանդիստ և օրհնութեան հանդէսը։ Յարմար ժամանակ ուսումնարանի Տեսուչ Վահան Վարդապետ Բաստա-